

Աղվերանից, որտեղ արցախցի երեխաները հանգստանում էին ՀՀ ներքին գործերի նախարարության պանսիոնատում, ավտոբուսը դուրս եկավ վաղ առավոտյան: Փոքրիկներն աշխույժով բարձրացան «Իկարուս»: Նրանց աչքերում անհամբերություն էր նկատվում: Իմ այն հարցին, թե կցանկանայի՞ն էլի մի քանի օր մնալ, գրեթե բոլորը բացասաբար պատասխանեցին: Մի սրամիտ պատանյակ էլ նկատեց. «Ըստեղ լավ էր, բայց գնանք մեզ մոտ, Արցախում էլ մի կուճուր հանգստանանք»: Այս ճանապարհը հակառակ կողմից երեխաներն անցել էին քանհինգ օր առաջ: Հայաստանի պետական հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետական խորհուրդը, որ անվճար ուղեգրեր էր տրամադրել երեսունհինգ երեխայի, ավտոբուս էր վարձել ինը հազար ություղ, իսկ հետդարձի համար դեպի Ստեփանակերտ՝ քսաներեք հազար: Դե ինչ, ավտոձեռնարկություններում էլ շուկայական անհասկանալի հարաբերություններ են:

Ճանապարհին տեղեկացանք, որ Գորիսի շրջանում թեժ կռիվ է: Բոլորի տրամադրությունն ընկավ: «Ուր գնում ենք, կռիվը մեր հետևից գալիս է», — նկատեց երեխաներից մեկը: Հետո սկսեցին խոսել զենքի տեսակների մասին: Նրանցից յուրաքանչյուրը կատարյալ գիտակ էր այդ հարցում:

Գորիս քաղաքը նոր էինք շրջանցել ու հասել բարձունքներին, երբ լսեցինք պայթյունի ձայներ: Տեսանք Կուրաթլիի տարածքից դեպի Գորիսի սահմանամերձ գյուղերը սլացող արկերը: Վարորդն անհանգիստ էր երեխաների համար: «Անտեր ավտոբուսն էլ տեղով մեկ թիրախ է, ամեն կողմից երևում է» — դժգոհեց նա:

Սահմանամերձ գյուղերը ծխում էին: Կուրաթլիի տարածքում էլ ծխացող արտեր ու տներ կային: Մերոնք էին պատասխանել թշնամու կրակոցներին: Լաչինում տեսանք, թե ինչպես հակառակորդի «Սու—25»-ը երկու ումբնետեց ավերված ու անմարդաբնակ Լաչինի վրա: Ռումբերից մեկը դիպավ քաղաքի մերձակա ժայռերին, իսկ մյուսը ճանապարհի եզրին գտնվող կանգուն պատերով մի տան վրա ընկավ: Տուներ վայրկենապես ցաքուցրիվ եղավ: Գառուփոսերով սլացող ավտոբուսում ոչ ոք չէր

խոսում: Իսկ երբ մոտեցանք Ծուշիին, երեխաները դարձյալ աշխուժացան: Նրանցից մեկը սրամտեց. «Մոռացել էի, որ շերումս մի «Գրադ» կա: Ափսո՛ւ, շուտ պիտի հիշեի»:

Ստեփանակերտի տեսքը տխուր էր: Ամիսներ շարունակ Ծուշիի բարձունքներից գնդակոծված քաղաքը դարձյալ զգում էր «Սու—25» ոմբակոծիչի սարսափը: Նախօրեին սեփական մի քանի տուն էլ կործանվեց ու դարձյալ մարդիկ զոհվեցին: Թեև կեսգիշերը վաղուց էր անցել, ու հոգնած էի այդքան ճանապարհն անցնելուց, բայց քնելու ցանկություն չունեի: Ժորա Տերտերյանի հետ զրուցում էինք: Նրա ընտանիքի անդամներից ոչ ոք չէր ուզում քնել: Բոլորը լսում էին այս պատերազմի մասին մեր կարծիքները, վիճում: Զրուցում էինք անցած և գալիք օրերի մա-

## ԱՐՑԱԽԸ ԿԱՆՉՈՒՄ Է

սին, հույս հայտնում, որ այս ամենը կավարտվի, ամեն ինչ լավ կլինի: Այս միտքն ավելի շատ պնդում էր արցախցի իմ ծանոթը: Զրույցի պահին մեր ականջին հասավ ինձ համար անհասկանալի ինչ-որ դժգոհ: Ժորայի դուստրը՝ Ինան, անհանգիստ նկատեց՝ սամալյոտա: Ես նրա աչքերում սարսափ տեսա, ամիսների, տարիների անհանգստությունը բերող սարսափ: Հայրը փորձեց դստերը հանգստացնել, ասելով, որ դա ուրիշ աղմուկ է, բայց երեխան համոզված կրկնեց՝ սամալյոտա... Գիշերը աչք չփակեցի: Հայացքիս դեմ քանդված, ամալյացած տներ էին: Առավոտյան հրապարակի մոտակայքում մարդկանց խմբեր էին կուտակվել: Մարտակերտից էին: Նրանցից շատերը հավաքվեցին իմ շուրջը: Երկար զրուցեցինք: Հասկացա, որ նրանք ամոքիչ խոսքի կարոտ են, լավ ու հուսադրող խոսքի:

Գնացի քաղաքային շուկա: Այն երբեմնի առատ, աշխույժ ու աղմկոտ շուկան չէր:

Բայց էլի առևտուր էր գնում: Տրակտորներով լոթի բերեցին գյուղերից: Ծուկան էլ նկարեցի: Մի մարդ ուշադիր նայեց ինձ, լուսանկարչական սարքին ու դառը քսմի-ծաղեց. «Թե որ էդքան դոշաղ ես, գնա կրոնիվը նկարիր»: «Ես լուսանկարիչ չեմ, հայրիկ»: «Թե որ նկարել չգիտես, էլ ինչի՞ ես էդ սարքը ձեռք վերցրել»:

Ստեփանակերտում, ողջ Արցախում մի քանի օր է, ինչ էլեկտրականություն չկա: Բարձր լարման գծերը Կուրաթլիի տարածքից գնդակոծել, կտրտել են: Բայց մարդիկ դրան վաղուց են սովոր: Տներում վառարաններ են դրել, նավթավառներ: Ստեփանակերտում հայտնվել են նաև ավանակներ ու ձիեր: Դրանց տերերը իրենց երջանիկ են զգում, բովհետև գրաստների միջոցով կարողա՞ւմ են անտառից ցախ բերել, մի կերպ լողալ օրվա ապրուստը:

Դժվար կյանքով են ապրում արցախցիները: Ապրում են վաղվա հավատով: Հաստատունները շատ-շատ են: «Այս հողը մերն է եղել ու կմնա»: Ոմանք էլ գայրանում են. «Ուժով պահել կլինի»: «Հենց ուժով պետք է պահել», — ասում են մյուսները: «Ափսոս, տղերքը զոհվում են»: «Թըշնամին էլ է զոհվում»: «Իրանք ավելի շատ են կոտորվում, բայց նրանք շատ են: Թեկուզ նրանցից հարյուրն էլ մեռնի, մեզնից՝ միայն մեկը, մեր մեկն էլ շատ է»: Այսպիսին են արցախցիները՝ իրենց բնության նման պարզ ու զուլալ, բնության նման հանճարեղ ու հաստատուն: Միայն թե օգնության խիստ կարիք ունեն: Պետականորեն: Արցախի ազատամարտիկներին և նրանց ընտանիքներին այս տարի անվճար տրամադրել ենք 70 ուղեգիր: Հարցը բոլորովին էլ քչի կամ շատի մեջ չէ: Հույս ունեմ, որ շուտով էլի կգնամ Ստեփանակերտ: Արցախի պետական հիմնարկների աշխատողների արհմիության կոմիտեի նախագահ Կարինե Տերտերյանը թեև չէր ցանկանում դարձյալ խնդրել՝ դրամով օգնելու ծնողազուրկ երեսուն երեխաներին, բայց, միևնույն է, պիտի նորից գնամ: Մարտնչող Արցախը կանչում է:

Դերենիկ ՔԱՄԱԼՅԱՆ  
Հայաստանի պետական հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետական խորհրդի փոխնախագահ